

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 3, 1957 Общественные науки

ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻ

(Մենդյան 70-ամյակի առթիվ)

Սույն թվականի մարտի 20-ին բոլորեց սովետական ականավոր գիտնական, հայագետ, կովկասագետ և արևելագետ ակադեմիկոս Հովսեփ Օրբելու 70 տարին։ Նրա կյանքն ընթացել է գիտա-ստեղծագործական և հասարակական գործունեության լայն ուղիով։ Մեծ և բազմակողմանի են Հ. Օրբելու վաստակները, հանրահայտ է նրա անունը։

Ավարտելով դասական գիմնազիան Թբիլիսիում, Օրբելին 1904 թ. մտնում է Պետերբուրգի համալսարանը և 1911 թ. ավարտում է նրա դասական ու արևելագիտական բաժինները։ Հովսեփ Օրբելին որպես գիտնական աճել ու ձևավորվել է ռուսական արևելագիտության այն նշանավոր միջավայրում, որի առավել աչքի ընկնող սյուներից էին ակադեմիկոսներ Ն. Յա. Մարը, Յա. Ի. Սմիրնովը, Ս. Ֆ. Օլդենբուրգը, Վ. Վ. Բարտոլդը, Ի. Յու. Կրաչկովսկին և ուրիշները։ Սկսած 1906 թ. մինչև 1914 թ. Հ. Օրբելին մասնակցել է Հայաստանի միջնադարյան նշանավոր մայրաքաղաք Անիի պեղումներին, որոնք կատարվում էին Մառի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ, բացառիկ նախանձախնդրությամբ ու եռանդով։ Այստեղ՝ Անիում էլ դրսևորվում են երիտասարդ Օրբելու գիտական ձիրքերն ու մեծ էրուդիցիան։ 1909—1911 թթ. հրատարակվում են նրա առաջին աշխատությունները, նվիրված գերազանցապես Անիին, որոնցով նա հաստատուն տեղ է գրավում գիտության մեջ, նախ՝ որպես հայագետ-կովկասագետ, ապա և որպես արևելագետ։ Անի, Մառ, Օրբելի, այս երեք անունները մեր գիտակցության մեջ իրար հետ կապված են անխզելիորեն։

Օրբելին արդեն ճանաչված գիտնական էր և 1911 թ. Գիտությունների ակադեմիան նրան գործուղում է Թուրքահայաստան, ուր նա մինչև 1912 թ., մոտ մի տարի, գիտա-հետազոտական աշխատանքներ է կատարում Վանի, Էրզրումի, Հին Բայազետի վիլայեթներում, ուսումնասիրելով ուրարտական, հայկական և սելջուկյան հուշարձանները, առանձնապես Աղթամարա վանքը։ Այս գործուղման ընթացքում Օրբելին ուսումնասիրում է նաև Մոկսի բարբառը, քրդերեն լեզուն և Պետերբուրգ է վերադառնում իր հետ բերելով առատ նյութեր, որոնք Անիում հավաքածների հետ միասին դառնում են նրա մի շարք գիտական հետազոտությունների աղբյուրը։

1914 թ. Օրբելին վերադառնալով Անիից, ստանձնում է Պետերբուրգի համալսարանի պրիվատ-դոցենտի պաշտոնը և սկսում է դասախոսություններ կարդալ հայոց պատմության, հնագիտության և էպիգրաֆիկայի վերաբերյալ։

1916 թ. Ռուսական Հնագիտական ընկերությունը Մառին և Օրբելուն գործուղում է Վան՝ ուրարտական մայրաքաղաքի ուսումնասիրության նպատակով։ Գործուղման արդյունքները գերազանցեցին սպասվածից, փայլուն եղան, մանավանդ, Օրբելուն բաժին ընկած հաջողությունները։ Պեղելով Վանա ժայռը Օրբելին հայտաբերեց ուրարտական Սարդուր 2-րդ թագավորի տարեգրու-

թյունները, որոնք գիտական մեծ արժեք են ներկայացնում և ընդարձակությամբ զիջում են միայն Խորխորյան ուրարտական արձանագրություններին։ Սարգուր 2-րդի տարեգրության հայտնաբերումով Հ. Օրբելին խոշոր ծառայություն մատուցեց գիտությանը։

1917 թ. Օրբելին իր ուսուցիչների հետ միասին, առանց վարանման, ընդունում է Հոկտեմբերյան ռևոլյուցիան և որոշում ծառայել նրան։ 1918—1920 թթ. Օրբելին, իրեն հատուկ մեծ եռանդով, գիտական և կազմակերպչական մեծ գործունեություն է ծավալում, զբաղեցնելով Պետերբուրգի Արխեոլոգիական ինստիտուտի ասիստենտի, ապա դասախոսի, Մոսկվայի Լազարյան ինստիտուտի պրոֆեսորի, Պետերբուրգի Թանգարանային խորհրդի գիտական քարտուղարի, Արվեստի պատմության ինստիտուտի պրոֆեսորի պաշտոնները։ Նա խոշոր մասնակցություն է ունենում Լազարյան ինստիտուտի վերակառուցման, Ռուսական Նյութական կուլտուրայի ակադեմիայի կազմակերպման աշխատանքներին։ 1919 թ. օգոստոսից, Օրբելին ընտրվում է այդ ակադեմիայի անդամ, ապա և նրա գիտական քարտուղար։ Օրբելին խոշոր մասնակցություն է ցուցաբերում Սովետական երկրի կուլտուրական շինարարությանը, Սովետական իշխանության առաջին տարիներից սկսած։

Հովսեփ Օրբելու գիտա-կազմակերպչական գործունեության մեջ ամենից ավելի աչքի է ընկնում նրա աշխատանքը աշխարհի չորս խոշորագույն թանգարաններից մեկը հանդիսացող Պետական Էրմիտաժում, սկսած 1919 թ.։ Տարիների ընթացքում նրա ղեկավարությամբ ստեղծվում է Էրմիտաժի Արևելքի բաժինը, որն ինքնին մի հսկայական թանգարան է, նվիրված Արևելքի պատմությանն ու կուլտուրային։ 1934 թ. մինչև 1951 թ. Օրբելին վարել է Պետական Էրմիտաժի դիրեկտորի պաշտոնը, մեծապես նպաստելով այդ մեծ թանգարանի աճմանը, նրա անգնահատելի արժեքների պահպանմանը և գիտական կադրերի պատրաստմանը։

Հովսեփ Օրբելու գործունեությունը Պետական Էրմիտաժում, առանձնապես Արևելքի կուլտուրայի՝ այստեղ կուտակված հսկայական նյութերի ուսումնասիրությունն ու կուլտուր-պատմական սիստեմատիզացիան հսկայական գիտական նշանակություն ունի, որը դժվար է գերագնահատել։

Հովսեփ Օրբելին հայ ժողովրդի հետ կապված է ոչ միայն ծագումով, Անիում կատարած աշխատանքներով և իր գիտական ստեղծագործություններով, այլև իր խոշոր ծառայություններով Սովետական Հայաստանի գիտության և կուլտուրայի բարգավաճման գործում։ Հովսեփ Օրբելին հմտորեն ու մեծ էրուդիցիայով է ղեկավարել ՍՍՌ Միության Գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալը (1938—1943) և որ ավելի անմոռանալի է, Հայրենական պատերազմի տարիներին Հովսեփ Օրբելին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կազմակերպողներից մեկը եղավ և որպես նրա առաջին պրեզիդենտը ղեկավարեց ու հաստատուն հիմքերի վրա գրեց նորաստեղծ Ակադեմիայի աշխատանքները 1943—1946 թթ.։

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին ունի 70-ից ավելի գիտական աշխատություններ, որոնց մեջ հայագիտական, կովկասագիտական և արևելագիտական հարցերը քննության են առնվում զարմանալի խորությամբ, Առաջավոր Արևելքի ժողովուրդների պատմության և կուլտուրայի ընդարձակ կապակցությունների մեջ։ Քննարկվող պատմական էպոխան լուսաբանվում է իր հասարակական հարա-

բերություններով, կուլտուր-պատմական ընդհանրություններով և առանձնահատկություններով։

Օրբելու բազմակողմանի և բազմաբովանդակ աշխատությունները կարելի է բաժանել երեք խմբի։

Առաջին և ամենաստվար խումբը (36 անուն) կազմում են Հայաստանի, Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի նյութական կուլտուրային և արվեստին նվիրված ուսումնասիրությունները։ Նյութական կուլտուրայի հուշարձանները Օրբելին քննության է առնում իբրև արդյունք հասարակության պատմական զարգացման որոշակի աստիճանի և բարդ կապակցություններով հարուստ կոնկրետ միջավայրի։ Միաժամանակ նա ցույց է տալիս կուլտուրայի զարգացման առանձնահատկությունները, բազմազան կապերն ու հարաբերությունները, ըստ որում, կուլտուրայի զարգացման ազգային և դավանաբանական հատկանիշների ու սահմանների դերը ավելի ստորադաս է սոցիալ դասակարգային հատկանիշների ու սահմանների խաղացած դերի նկատմամբ։ Ահա այս է կազմում Օրբելու հետազոտության կուլտուր-պատմական մեթոդի էությունը։ Այս դիրքերից էլ Հովսեփ Օրբելին սուր քննադատության է ենթարկում պանիսլամիզմը, որը իսլամը դավանող բազմաթիվ երկրների կուլտուրան դիտում է իբրև մի միասնական ամբողջություն և որը միաժամանակ «իսլամական» Արևելքի կուլտուրան հակադրում է քրիստոնեական Արևելքի կուլտուրային։ Նա քննադատում է պանիրանիզմը, որը Մերձավոր Արևելքի մի շարք երկրների կուլտուրաները լուծում է. իրանականի մեջ կամ քննարկում իրանականից կրած ազդեցությունների տեսանկյունով. Օրբելին քննադատելով «սելջուկյան կուլտուրայի» տեսությունը, եզրակացնում է, թե այդ կուլտուրան իրոք սելջուկյան-թուրքական չէ, այլ ստեղծվել է պատմական և սոցիալական որոշ պայմաններում՝ իրանա-կովկասյան կուլտուրական հիմքի և այս երկրները հեղեղած անդրկասպյան ժողովուրդների ճաշակի սինթեզով, ըստ որում, ստեղծագործողները եղան տեղական ժողովուրդները, իսկ սելջուկները նոր պայմաններում զարգացող այդ կուլտուրայի խմորողի դեր խաղացին։ Տեսական այս հարցերի քննարկումը, որը կատարել է Օրբելին իր աշխատություններում և 1935 թ. Լենինգրադում գումարված իրանական հնագիտությանը և արվեստին նվիրված միջազգային կոնգրեսում կարդացած զեկուցման մեջ, ընդհանուր արևելագիտական խոշոր նշանակություն ունեն։

Օրբելու աշխատություններն ու հոդվածները, նվիրված կոնկրետ հնագիտական նյութերին կամ արվեստի ստեղծագործություններին, զարմացնում են իրենց խորությամբ, պատմական հարցերի և նրանց կապակցությունների ընդգրկումով։ Նա նյութական կուլտուրայի հուշարձանը քննարկում է պատմության, կուլտուրայի, լեզվի, կրականության, ժողովրդական բանահյուսության և ազգագրության ընձեռնած բազմակողմանի տվյալների լույսի տակ, տալով ուսումնասիրության այս կոմպլեքս մեթոդի կիրառման ցայտուն օրինակներ։

Նյութական կուլտուրայի և արվեստի պատմությանը Օրբելու նվիրած աշխատությունների շարքում Անիին, Ամբերդին և իրանական կուլտուրային ու արվեստին, մասնավորապես սասանյան գեղարվեստական մետաղագործությանը վերաբերող աշխատությունների կողքին, առանձին տեղ է գրավում նաև

Աղթամարի հուշարձաններին նվիրված ընդարձակ մենագրությունը, որը հրատարակության է պատրաստվում։

Հովսեփ Օրբելու աշխատությունների երկրորդ խումբը կազմում են հայերեն վիմական արձանագրություններին վերաբերող գործերը։ Սրանք ևս ունեն բացառիկ արժեք։ Օրբելին ոչ միայն հավաքել է հարյուրավոր հայերեն արձանագրություններ, այլև մշակել է դրանց գիտական վերծանության, մեկնաբանության և հրատարակության սկզբունքներն ու մեթոդները։ Լույս ընծայելով 13 հայերեն արձանագրություն, Օրբելին մշակեց հայերեն հատուկ էպիգրաֆիկ շրիֆտ, որով պետք է հրատարակվեին հայերեն արձանագրությունների իր նախաձեռնած ժողովածուները՝ կորպուսը։

Հայագիտության համար խոշորագույն նշանակություն ունեցող այդ գործը վերսկսված է և այժմ հրատարակության հանձնելու համար պատրաստվում է Անիի և շրջակայքի արձանագրությունների՝ Օրբելու կազմած ժողովածուն։

Մեծավաստակ գիտնականի աշխատությունների երրորդ խումբը կազմում են նրա բանասիրական, լեզվագիտական և գրականագիտական աշխատությունները (թվով 20-ից ավելի)։ Այս բնագավառում ևս հեղինակի գործերը աչքի են ընկնում ընդգրկման լայնությամբ, ուսումնասիրության թափով և գիտական ընդհանրացումների ուժով։ Հայկական տեքստերի հրատարակություն և նրանց մեկնաբանություն (Անանիա Շիրակացու «Հարցումն և լուծումն»), հայ և վրաց գրականություն (միջնադարյան հայկական առակներ, Շոթա Ռուսթավելու ստեղծագործության գնահատությունը), հայերեն և քրդերեն լեզու և ժողովրդական բանահյուսություն — ահա Հովսեփ Օրբելու հետաքրքրության շրջանակները այս ուղղությամբ։ Նա ոչ միայն տվեց նոր խոսք ասող նշանավոր գործեր նաև այս բնագավառում, այլև իր աշխատություններով ու գործունեությամբ նպաստեց հայ, վրաց և քրդական գրականության ու ժողովրդական բանահյուսության ժողովրդականացմանը։ Այս տեսակետից բացառիկ նշանակություն ունեցան Լենինգրադում Շոթա Ռուսթավելու 750-ամյակի և Երևանում Սասունցի Դավիթ ժողովրդական վեպի 1000-ամյակի կազմակերպման ու անցկացման ուղղությամբ նրա գործադրած ջանքերը, գիտական խոշոր ընդհանրացումներով գրված աշխատությունները, հռետորական մեծ ձիրքով ու վարպետությամբ կարդացած բազմաթիվ զեկուցումները։

Մեծ հմտությամբ է նրան հաջողվում վեր հանել հայ և հարևան ժողովուրդների կուլտուրայի, գրականության, բանահյուսության և ավանդությունների էությունը, գտնել նրանց դարավոր արմատներն ու շերտավորումները, արժեքավորել դրանք և մտքի ո՞րպիսի թռիչքով, խոսքի ո՞րպիսի պատկերավորությամբ ու պաթոսով։

Հայրենական պատերազմի տարիներին Օրբելին իրեն դրսևորեց որպես խոշոր բաղաքացի, աչքի ընկնող դեր խաղալով Պետական էրմիտաժի և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի՝ Լենինգրադում գտնվող մյուս հիմնարկների թանգարանային և գրադարանային արժեքների պահպանության գործում։ Անմոռանալի են նրա զեկուցումներն ու ելույթները զինվորական մասերի, բանվորական կոլեկտիվների առաջ, Կովկասի պաշտպանությանը նվիրված միտինգում և Նյուրնբերգյան դատավարության ժամանակ։

Ականավոր գիտնական, տաղանդավոր կազմակերպիչ և մեծ քաղաքա-

ցի, ահա թե ինչպիսի եռյակ միասնություն է անձնավորում ակադեմիկոս Հովսեփ Օրբելին։

Սովետական հասարակայնությունը՝ և կառավարությունը բարձր են գնահատել Օրբելու ծառայությունները։ Օրբելին ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ է 1935 թվականից, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ՝ 1943 թվականից։ Իր գիտական և գիտակազմակերպական գործունեության համար նա պարգևատրվել է Լենինի շքանշանով, Աշխատանքային Կարմիր դրոշի երկու շքանշանով ու մեդալներով։

Օրբելին լայնորեն ճանաչված է նաև արտասահմանում։ Նա պատվավոր անդամ է Իրանի Ակադեմիայի և Թեհրանի համալսարանի, Անտիկվատների լոնդոնյան ընկերության։ Անդամ-խորհրդատու է Իրանական արվեստի ուսումնասիրության Ամերիկյան ինստիտուտի։ Նա հանդիսանում է իրանական արվեստի միջազգային յոթ հատորյա կապիտալ հրատարակության խմբագրական կոլեգիայի անդամ։

Ցանկանք մեծավաստակ և ականավոր գիտնականին քաջառողջություն, Երկար կյանք ու բեղմնավոր աշխատանք, ի փառս սովետական գիտության։